Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում հաստատության ղեկավարի անունով,

2) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

3) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ)*,

4) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում) կամ տեղեկանք աշխատավայրից:

** Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝*

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

☑ Դիմորդը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով (ներառյալ հանրային ծառայությունների համարանիշ):

☑ Արական սեռի ներկայացուցիչները պետք է ներկայացնեն նաև զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական: